ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան **«10»«01»2019թ.**
ժամը՝ 15:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման պատասխանատու՝ **Ա. Մեսրոպյան**:

Հանձնաժողովի անդամներ ՝
ԱԻՆ ֆինանսատնտեսագիտական վարչության ֆինանսաբյուջետային բաժնի պետ՝ **Ա. Մկոյան**:
ԱԻՆ ՓԾ թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պլանավորման, հաշվառման և վերլուծության բաժնի պետ **Գ.Բոյաջյան:**

Հանձնաժողովի քարտուղար՝
ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության փորձագետ ՝
Ա. Մարգարյան:

ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/2 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց ձեռքբերվող ապրանքի նախահաշվային գինը մեկ թվով արտահայտված՝

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	նախահաշվային գինը /դրամ/
1	Բենզին ռեգուլյար	92 619 930

1. **Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**
   «ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի հայտերը էլեկտրոնային www.eauction.armeps.am համակարգի միջոցով բացվել են Արտակարգ իրավիճակների նախարարության շենքում ք.Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղ., Ա.Միկոյան 109/8 հասցեում:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/ և գտնվելու վայրերի հասցեները.**

N/N	Մասնակցի անվանումը	հասցեն
1	ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն ՍՊԸ	ք. Երևան, Պուշկինի 1
2	Ֆլեշ ՍՊԸ	ք. Երևան, Ե.Կողբացի 30
3	Մաքս Օիլ ՍՊԸ	ք. Երևան, Տպագրիչների փող., 8 շենք, տարածք 1/1

Կողմ՝ 3, դեմ՝ 0

3. **Տվյալներ՝ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 3, դեմ՝ 0

4. **Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի շրջանակներում մասնակիցները ներկայացրել են անհրաժեշտ փաստաթղթերը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0

5. **Մասնակիցների առաջարկած գները.**

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Մասնակցի անվանումը	Վերջին առաջարկ		
			Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գումար
1	Բենզին ռեգուլյար Բենզին ռեգուլյար	Մաքս Օիլ ՍՊԸ	77183275	20 %	92619930
		Ֆլեշ ՍՊԸ	78677463.79	20 %	94412956.54*
		Սիֆիէս Օիլ Քորփորեյշն ՍՊԸ	82724638.34	20 %	99269566 *

*Էլեկտրոնային աճուրդների իրականացումն ապահովող www.eauction.armeps.am համակարգը ավտոմատ եղանակով մերժել է նախահաշվային գները գերազանցելու հիմքով:

6. **Տվյալներ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

Հարցումներ չեն ստացվել:

7. **Հանձնաժողովը որոշեց՝**

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշման հավելված 1-ի 17-րդ կետը:

ա) «Մաքս Օիլ » ՍՊԸ-ի ներկայացված հայտը գնահատել բավարար և ճանաչել **ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/2** ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշման հավելված 1-ի 19-րդ կետը՝

ա) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

բ) ծանուցել առաջին տեղ զբաղեցնող մասնակիցներին առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով սույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները

համակարգի միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 2-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝

1. Իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 3-ի.

2. Հայտը ներկայացնելու տարվա և դրա նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը.

1. Հաջորդ նիստը գումարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից տեղեկատվության և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը ստանալուց ոչ ուշ, քան 2-րդ օրը:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Ա. Մեսրոպյան**

Հանձնաժողովի անդամներ՝ _____ **Ա. Մկոյան**

_____ **Գ. Բոյաջյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ **Ա. Մարգարյան**